պահպանմամբ:

6. Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ դատարանի պատճառաբանությունը.

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

«Պետական տուրքի» մասին օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ:

«Պետական տուրքի» մասին օրենքի 9-րդ հոդվածի 9.3 կետի համաձայն՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով նախատեսված վեճերով՝ պետական տուրքը գանձվում է բազային տուրքի 60-ապատիկի չափով:

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի մեջ ընդգրկել է նաև պետական տուրքի գումարը, որը հաշվարկվում է օրենքով սահմանված կարգով: Նման հաշվարկի հիման վրա է որոշվում օրենքով սահմանված և պարտադիր վճարման ենթակա պետական տուրքի չափը:

Տվյալ պարագայում Հայցվորի կողմից նախապես վճարվել է 60,000 ՀՀ դրամի չափով պետական տուրք, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ ելնելով բավարարված պահանջների համամասնության կարգով պետական տուրքի բռնագանձման սկզբունքից:

(IV) Եզրափակիչ մաս

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական հիմքերը և հիմնավորումները, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ, 109-րդ, 179-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով և 27.2-րդ գլխով՝

ՎՃՌԵՑ

1. «ՓՐՈՄՈՈՒԾՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՊՄ-ի՝ ՀՀ

կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հայտարարված թիվ «ՀՀԿԳՄՍՆԿԳԲՄԾՁԲ-25/4» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը ոչ իրավաչափ ճանաչելու, և որպես հետևանք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նոր ընթացակարգ հայտարարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Մալվինա Հարությունյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE07-2E2F-4D06-8166 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am